


Հարգելի՛ քաղաքացիներ,

Կադաստրի կոմիտեի <http://www.e-cadastre.am> կայքէջում գործարկվել է միասնական տեղեկանքի տրամադրման համար էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու առավել հեշտ և պարզեցված համակարգ («Միասնական տեղեկանք»):


Պարզեցված եղանակով «Միասնական տեղեկատվության տրամադրման» դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է մուտք գործել Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակ:



Մուտքագրել՝ Ձեր մուտքանունը և գաղտնաբառը (էլ. հասցե և գաղտնաբառ): Եթե գրանցված չեք հարթակում, այս հղմամբ կարող եք տեսնել քայլերի հաջորդականությունը.


https://www.e-cadastre.am/storage/files/pages/pg_9525365400_grancum_ecadastre.pdf:


Համակարգ մուտք գործելուց հետո անհրաժեշտ է ընտրել «Միասնական տեղեկանք» դաշտը:




Դիմումի մուտքագրման փուլում ընտրել գույքի նպատակային նշանակությունը, որից հետո մուտքագրել սեփականության վկայականի համարը կամ կադաստրային ծածկագիրը և սեղմել

«Փնտրել» կոճակը: Արդյունքում համակարգն ինքնաշխատ կլրացնի հասցեի համար նախատեսված դաշտերը՝ մարզ, համայնք, փողոց, շենք և շինություն:

Դիմողի անձնական տվյալներ 

Դիմումի հասցե 

Գույքի նպատակային նշանակությունը *
Այլ նշանակության անշարժ գույք 


Վկայականի համար **Փնտրել**

Կադաստրային ծածկագիր


Մարզ *


Շենք Շինություն

Գույքի հասցե
Երևան, Արարկիր


Ընտրել դիմումի կատարման ժամկետը 

3 օր - 10000 դր. 2 օր - 20000 դր. 2 ժամ - 60000 դր.

Ներկայացվող փաստաթղթեր 

Փաստաթղթի տեսակ  Ֆայլ

Ներկայացվող փաստաթղթերի քանակը՝ 0

Դիմումին կից նշումներ 

Գրանցել

Այնուհետև ընտրել դիմումի կատարման ժամկետը և սեղմել «Գրանցել» կոճակը:
Հիշեցնենք, որ այս դեպքում հանվել է փաստաթուղթ կցելու պարտադիր պահանջը: Անձը հաստատող կամ այլ փաստաթուղթ կարող եք կցել ձեր հայեցողությամբ:
Համակարգը Ձեզ անմիջապես կտեղափոխի վճարման փուլ:

Դիմումի ընդունում | **Փաստաթղթերի վերբեռնում** | **Վճարում**

Վճարման ներսկա գումարը կազմում է 10000 ՀՀ դրամ
Ցանկանում եք շարունակել:

Դիմումի վճար

Եթե վճարումը նախապես կատարվել է www.e-payments.am պետական վճարումների կենտրոնային համակարգի միջոցով, ապա կարող եք օգտագործել վճարման անդորրագիրը մուտքագրելով 20 նիշանոց ծածկագիրը:

Ցանկանում եք մուտքագրել:

Վճարման ներսկա գումարը կազմում է 10000 ՀՀ դրամ

Գործում է վճարման երկու տարբերակ՝

- Վճարում իրականացնել կայքում,

- Վճարել www.e-payments.am պետական վճարումների էլեկտրոնային համակարգում և մուտքագրել համակարգի կողմից գեներացված 20 նիշանոց ծածկագիրը:

Առաջին տարբերակի ընտրության դեպքում անհրաժեշտ է սեղմել «Այո» կոճակը և լրացնել Ձեր բանկային քարտի տվյալները: Հաստատել վճարումը, այնուհետև հաղորդագրության միջոցով ստացված կոդը լրացնել համապատասխան դաշտում և վերջնական հաստատել գործարքը:

Վճարման երկրորդ տարբերակի ընտրության դեպքում անհրաժեշտ է լրացնել 20 նիշանոց ծածկագիրը և որոնել այն: Ծածկագիրն ակտիվ լինելու դեպքում համակարգն այն կընդունի:

Եթե վճարումը նախապես կատարվել է www.e-payments.am պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա կարող եք օգտագործել վճարման անդորրագիրը մուտքագրելով 20 նիշանոց ծածկագիրը:

Ցանկանում եք մուտքագրել:

Վճարման ծածկագիր*

1111
1111
1111
1111
1111



Վճարումը հաստատելուց հետո Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին կստանաք Ձեր կողմից իրականացված վճարումը հավաստող անդորրագիր, ինչպես նաև «Դիմումի ընդունման վերաբերյալ ստացական»:

«Դիմումների ցանկ» բաժնում կարող եք տեսնել մուտքագրված դիմումը՝ կից ներկայացված փաստաթղթերով: